



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Ի՞նչ գրեթե եմ հրատարակվելու 1959 թվականին.— Հայաստանի Պետական հրատարակչությունը որոշել է այս տարի հրատարակել 520 անուն գիրք՝ 3 318 000 օրինակ ընդհանուր տպաքանակով: Երազրի մեջ մեծ տեղ է տրված գեղարվեստական գրականության, լույս է տեսնելու հայ գրողների մոտ 130 անուն և 30 անուն թարգմանական գրականություն:

Պիտի հրատարակվի Ժ դարի գրական խոշորագույն հուշարձանը՝ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը աշխարհաբար թարգմանությամբ: Հրատարակվելու են նաև Լեոյի՝ «Մելիքի աղջիկը» վեպը և «Ոսկի ժողովրդի մեջ» վիպակը, գյուղագիր Հովհաննես Մալխասյանի՝ «Հորոտ-մորոտ» խորագրով երկերի միահատորյակը, Բագրատ Այվազյանի «Աշոտ երկաթ» վեպը:

Մեծ տեղ է հատկացված հայ դասական գրողների երկերի հրատարակմանը, լույս են տեսնելու Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի»-ն, Սայաթ-Նովայի՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով գրված տաղերի հատընտիրը, Զիվանու, Հ. Հովհաննիսյանի երկերի միահատորյակները: Պետք է սկսվի Ե. Օտյանի երկերի ժողովածուի նոր հրատարակությունը, շարունակվելու է Ա. Շիրվանզադեի, Բաքոյի, Հ. Քամանյանի, Վրթանես Փափազյանի և Ա. Իսահակյանի երկերի հրատարակությունը: Լույս կտեսնի գրականագետ Արսեն Տերտերյանի 7-հատորյա երկերի առաջին հատորը, Հրատարակվելու են սովետահայ գրողների նոր ստեղծագործությունները, այդ թվում Մ. Արազու «Իսրայել Օրի» և Ստեփան Զորյանի «1921 թվականը» պատմավեպերը, Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպի 1-ին և 2-րդ հատորները, Քր. Քափալցյանի «Պատերազմ» վեպի 3-րդ հատորը, Ա. Ստեփանյանի «Ամառնամուտ», Ա. Խաչատրյանի «Բագրևադի գավակը» վեպերը: Պետք է հրատարակվեն մեր երկրի և արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության մի շարք լավագույն նմուշներ: Ռուսերենից թարգմանված են Վ. Կովալյովի երկերը, Մ. Եհեկյանի «Ուլանովների ընտանիքը», Ի. Բունինի պատմվածքները և այլ ստեղծագործություններ:

Արտասահմանյան գրականությունից լույս են տեսնելու Հ. Հայնեի, Ա. Ֆրանսի երկերը, Վ. Շեքսպիրի սոնետները, Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն»-ը, Գ. Ֆլորբերի «Սալամբո» վեպերը, Դանթեի «Դրախտ»-ը, Լուի Արագոնի «Պոեզիա և պրոզա»-ն, Օմար Խայամի «Պոեզիա»-ն և այլն:

1 400 000-ից ավելի տպաքանակով գիրք է հրատարակվելու մանուկների համար: 40 անուն գիրք լույս կտեսնի երաժշտական գրականությունից: Առաջին անգամ լինելով պետք է իրականացվի հայ ազգային երաժշտության հիմնադիր Կոմիտաս վարդապետի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը 10 հատորով: Այս տարվա հրատարակչության ծրագրում նախատեսված է նաև այլ ճյուղերի գրականության հրատարակումը:

Սալոնիկի միջազգային տոնավաճառի համար.— Այս տարի սեպտեմբերին Հունաստանում կազմակերպվում է Սալոնիկի 23-րդ միջազգային տոնավաճառը: Տոնավաճառում այս տարի առաջին անգամ ցուցադրվելու են նաև Հայաստանի արդյունաբերության արտադրանքները, դրանց թվում՝ շարժական էլեկտրակայան, տրանսֆորմատոր, ասինխրոնային էլեկտրաշարժիչ, կոմպրեսոր, գինիներ և կոնյակի տարբեր տեսակներ, ծխախոտ, հայկական գորգեր և այլ արտադրանք:

Երաժշտագետի պատվի երեկոն.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից, Երևանի երաժշտական հասարակայնության մասնակցությամբ, նշեց ինստիտուտի ավագ գիտաշխատող, ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր Գևորգ Տիգրանյանի ծննդյան 50-ամյակը: Տիգրանյանի վաստակը մեծ է հայկական երաժշտական մշակույթի զարգացման քաղաքական, Նրա հետազոտական աշխատանքի արդյունքն է հանդիսանում «Հայկական երաժշտական թատրոնը» րազմահատոր ուսումնասիրությունը, որի առաջին հատորը լույս է տեսել 1956 թվականին, իսկ երկրորդ հատորը արդեն պատրաստ է տպագրության, ինչպես նաև Ալ. Սպենդիարյանի

կյանքին և ստեղծագործությանը նվիրված ծավալուն մենագրությունը, որը տպագրվում է Մոսկվայում:

Պրոֆ. Գ. Տիգրանյանի երաժշտական վաստակի մասին զեկուցեց Ռ. Զարյանը: Ողջույնի խոսքեր ասացին Ռ. Աթայանը՝ Հայաստանի Կոմպոզիտորների Միության կողմից, պրոֆ. Գևորգ Բուզադյանը՝ Երևանի Կոմիտասի անվան Պետական կոնսերվատորիայի կողմից:

Երեկոյի վերջում շնորհակալական ջերմ ու հուզիչ խոսքով հանդես եկավ պրոֆ.-դոկտ. Գ. Տիգրանյանը:

Ակադեմիկոս Բ. Ֆանաբջյանի աշխատությունը չինահեմ.— 1957 թվականին ռուսերեն լեզվով Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս ընծայեց ակադեմիկոս Բ. Ֆանաբջյանի «Կրթական հասարակության օրգանների հիմնադրությունների ռեկոնստրուկցիայի և ծավալուն աշխատությունը: 1958 թվականին աշխատությունը վերահրատարակվեց:

Զինական ժողովրդական Ռեսպուբլիկայի բժշկական հրատարակչությունը ակադեմիկոս Ֆանաբջյանի վերոհիշյալ աշխատությունը թարգմանել է չինարեն և հրատարակել:

Զապել Եսայանի երկերի միեռադրյալը.— Հայպետհրատը լույս ընծայեց արևմտահայ ծանոթ կին գրող Զապել Եսայանի միահատորյալը, որի մեջ տեղ են գտել հեղինակի «Լենին» («Պրոմեթեոս ազատագրված» գրքից հատված), «Հանրի Բարբուլուի մոտ» ակնարկը, «Շնորհքով մարդիկ», «Հեղինա արտորյալ», «Նահանջող ուժերը», «Սիլիկոտարի պարտեզները» և այլ գործեր: Ցանկալի է տաղանդավոր գրագիտուհու ամբողջական գործերի վերահրատարակությունը:

Եսայանը ավելի քան քառասուն տարի ծառայել է հայ գրականությանը, ստեղծելով շատ արժեքավոր գործեր: Նա հայրենասեր մտավորականության այն դեմքերից մեկն է, որ 1920-ական թվականներից սկսված իր ամբողջ ստեղծագործական կորովն ու տաղանդը ի սպաս է դրել իր ժողովրդի կյանքին, մշակույթին ու գրականության զարգացմանը:

«Հայերենի շարանյութությունը».— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կողմից հրատարակվեց բանասիրական գիտությունների թեկնածու և Հոգևոր Ճեմարանի գրաբարի դասախոս դոցենտ Վարդ Առաքելյանի «Հայերենի շարանյութություն» մենագրության առաջին հատորը:

Առաջին հատորը ընդգրկում է պարզ նախադասության բնությունը: Երկրորդը ընդգրկելու է բարդ նախադասության բնությունը:

Հեղինակը երկար տարիների իր տրեւաշան աշխատանքով հետազոտել է և ի մի է բերել փաստական հսկայական նյութ, գիտականորեն մշակել է այն, դասավորել փաստերը և բազմակողմանիորեն քննարկել նյութը շոշափող բոլոր հարցերը:

Ժամանակակից հայերենի գիտական ուսումնասիրությանը նվիրված լուրջ ներդրում է Վ. Առաքելյանի «Հայերենի շարանյութությունը» աշխատությունը:

Վ. Համբարձումյանը գերմանական ակադեմիայի անդամ.— Աշխարհահռչակ աստրոֆիզիկոս, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը օտարերկրյա մի շարք ակադեմիկոսների և ընկերությունների պատվավոր կամ թղթակից անդամ է: Վերջերս նա ընտրվեց Գեոմիկրատական Գերմանիայի Լեոպոլդինայի բնական գիտությունների ակադեմիայի անդամ:

«Քաղաքներ և արհեստներ Հայաստանում Թ—Ժ» դաբերում.— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել պատմագետ դոկտ.-պրոֆ. Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում Թ—Ժ» դաբերում» արժեքավոր և մեծածախ աշխատության առաջին գիրքը: Բարեկեն Առաքելյանի այս աշխատության հրատարակումը միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության ուղղությամբ կատարվող քայլերից մեկն է և գիտական արժեքավոր ուսումնասիրություն:

«Ժն դարի հայերեն ձևագրերի միջատակառուցներ».— Այս խորագրեր կրող ժողովածուն կազմել է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի գիրքակառու Լ. Ս. Խաչիկյանը, որը վերջերս հրատարակվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից: Ժողովածուի առաջին մասը հրատարակված է 1955 թվականին: Ժողովածուն, որի մեջ ամփոփված են 1451—1480 թվականներին վերաբերող հիշատակարաններ, գրքի առաջին մասի անմիջական շարունակություն է:

Ժողովածուի ծավալուն առաջաբանը, որը գրել է Լ. Խաչիկյանը, նվիրված է Հայաստանի ժն դարի երկրորդ կեսի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության հարցերին:

Լ. Խաչիկյանի «Ժն դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ»-ը լուրջ, գիտական ուսումնասիրություն է, որը լույս է սփռում տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության վրա:

Ս. Ս.

